



« 10 » 09 2014թ.

N 59-Ղ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1515-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. Միգրացիոն պետական ծառայությունում (ՄՊԾ) առկա ներքոնշյալ տեղեկատվական համակարգերի ծրագրային ապահովման և ընթացիկ շահագործման աշխատանքների իրականացումը դնել «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ի վրա՝
 - Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վիճակագրական տեղեկությունների տրամադրման ինտերնետային համակարգ,
 - Առաջնահերթ բնակարանային կարիք ունեցող փախստականների ընտանիքների և բնակության պայմանների հաշվառման տեղեկատվական համակարգ,
 - Փախստականների մասին տեղեկությունների մշակման և տրամադրման տեղեկատվական համակարգ,